

**«Հայաստան ծառատունկ ծրագիր»  
բարեգործական հիմնադրամ («էյ Թի Փի» բլ Հ)  
22, 0026 Երևան  
Արշակունյաց պող. 57/5  
Հեռ.՝ (374 10) 447401/ 447402  
Հեռ./ֆաքս՝ (374 10) 447726  
Էլ. փոստ՝ [bella@armeniatree.org](mailto:bella@armeniatree.org)**

**ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
Մարտի 16, 2007**

**«Հայաստան ծառատունկ ծրագիր» բարեգործական հիմնադրամը  
համագործակցում է Ելի Համալսարանի Կայուն անտառկառավարման  
համաշխարհային ինստիտուտի հետ՝ «Քոնսերվեյշն ինթերնեշնլ»  
կազմակերպության աջակցությամբ Անտառկառավարման ծրագրի  
իրականացման նպատակով**

«Հայաստան ծառատունկ ծրագիր» բարեգործական հիմնադրամի (ՀԾԾ), Ելի  
Համալսարանի Կայուն անտառկառավարման գլոբալ ինստիտուտի  
([www.environment.yale.edu](http://www.environment.yale.edu)) և «Քոնսերվեյշն ինթերնեշնլ» կազմակերպության  
([www.conservation.org](http://www.conservation.org)) միջև հաստատված նոր համագործակցությունը  
կարմատավորի Հայաստանում կայուն անտառկառավարման միջազգային  
լավագույն փորձը: «Հայաստանի հյուսիսային շրջաններում կայուն  
անտառկառավարման մոդելների գնահատում և կիրառում» համատեղ  
նախաձեռնությունը նախատեսում է իրականացնել Լոռու մարզի անտառային  
էկոհամակարգերի խորը վերլուծություն՝ ուղղված կայուն անտառկառավարմանը  
և Հայաստանի տեղական խնդիրներն արտացոլող առաջին ուսուցողական  
ձեռնարկի ստեղծմանը:

Հայաստանի անտառածածկ տարածքների զգալի դեգրադացիան  
պարտավորեցնում է նոր և համարձակ մոտեցումներ կիրառել անտառների  
պահպանման գործում: Օգտվելով կայուն անտառկառավարման ոլորտում Ելի  
ունեցած փորձից, ՀԾԾ-ն և Հայաստանի առաջատար գիտնական և պետական  
պաշտոնյաները կհամագործակցեն ու համատեղ ուժերով կանցկացնեն  
Հայաստանում անտառկառավարման զարգացմանը նվիրված ուսուցողական  
դասընթաց: Հուսով ենք, որ ծրագիրը, իսկապես, կձևափոխի Հայաստանի  
լանդշաֆտը և կապահովի բնակչության կայուն ապագան:

Ծրագրի նպատակն է գնահատել անտառների վիճակը Հայաստանի հյուսիսային  
շրջաններում մասնավորապես, ուշադրություն դարձնելով անտառների  
վերարտադրությունը սահմանափակող գործոններին: Նախատեսվում է  
իրականացնել բույսերի, բժշկական նպատակներով օգտագործվող և այլ  
խտաբույսերի գնահատում, որոնց մշտական հավաքը անտառամոտ  
տարածքների բնակիչներին կարող է բերել այլընտրանքային եկամուտ:

Կկազմակերպվեն Հերթափոխային արածեցմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ անասնապահների համար Հողի էրոզիայից և անտառների հետագա դեգրադացիայից խուսափելու նպատակով:

Հատուկ մոդելային անտառ կաճեցվի, որը կօգտագործվի որպես ուսուցողական դասընթացների վայր՝ և զուգահեռ կստեղծվի համապատասխան ձեռնարկ, որում տեղ կգտնեն Հայաստանի հինքնատիպ շրջակա միջավայրի առանձնահատկությունները: Ձեռնարկը և ցուցադրական անտառահատվածը կօգտագործվեն հանրապետության բնակիչների և հատկապես անտառապահների համար կազմակերպվող նորանոր վերապատրաստումների ժամանակ:

Այս ծրագիրը ֆինանսավորվում է Կրիտիկական վիճակում գտնվող էկոհամակարգերի համագործակցության հիմնադրամի, «Քոնսերվեյշն հինթերնեշնլ»-ի, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի, Գլոբալ էլիտոգիական ֆոնդի, Ճապոնիայի ֆինանսների նախարարության, հնչպես նաև Ջոն Դ. և Քեթրին Թ. ՄքԱրթուր Հիմնադրամի համատեղ ջանքերով: Կրիտիկական վիճակում գտնվող էկոհամակարգերի համագործակցության հիմնադրամի ([www.cepf.net](http://www.cepf.net)) հիմնական նպատակն է ապահովել քաղաքացիական հասարակության մասնակցությունը կենսաբազմազանության պահպանման հարցում:

Ուղթերթաուն և Երևան քաղաքներում գործող, Հասարակայնության կողմից սատարվող և շահույթ չհետապնդող «Հայաստան ծառատունկ ծրագիր» / ՀԾԾ/ բարեգործական հիմնադրամն (որի պաշտոնական անվանումն է «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ) իրականացնում է կենսական նշանակություն ունեցող բնապահպանական ծրագրեր Հայաստանի աղքատացած և անտառազուրկ տարածքներում և աջակցություն է հայցում անտառների վերականգնման առաքելությունն իրականացնելու համար:

1994 թվականից ի վեր ՀԾԾ-ն մեծ հաջողությունների է հասել վտանգված կենսաբազմազանությամբ Կովկասյան տարածաշրջանում անապատացման դեմ պայքարում: ՀԾԾ կողմից արդեն տնկվել և վերականգնվել է շուրջ 1.5 միլիոն ծառ, և հարյուրավոր աշխատատեղեր են բացվել Հայաստանի բնակիչների համար ծառերի վերականգման ծրագրերում: Մանրամասն տեղեկությունների կամ ՀԾԾ-ին աջակցություն ցուցաբերելու համար այցելեք [www.ArmeniaTree.org](http://www.ArmeniaTree.org) ինտերնետային կայքը: